Արձանագրություն

Գեղարքունիքի մարզի Վարդաձոր համայնքի ավագանու 2013թ. Հոկտեմբերի 29-ի թիվ 7 նիստի:

Նիստին մասնակցում էին համայնքի ավագանու յոթ անդամներից չորսը՝ Մ. Ավետիսյանը, Շ. Կարապետյանը, Գ. Հայրապետյանը և Ն. Սիրականյանը, նացակայում էին Կ. Արսենյանը, Ա. Սիրականյանը և Պ. Մելքոնյանը /առանց հարգելի պատճառների/:

Նիստը վարեց գյուղապետ Ռ. Սիրականյանը:

Քարտուղարեց՝ Վ. Շահբազյանը:

Օրակարգում՝

Հարց-1. Համայնքի 2013թ. տարեկան բյուջեի առաջին 9 ամիսների կատարման արդյունքների մասին.

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-2 Համայնքի 2013թ. տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին,

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-3 ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2013թ. հոկտեմբերի 23-ի թիվ 187-Ա որոշմամբ ներկայացված առաջարկությունների քննարկումը

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Հարց-4 Համայնքի մի խումբ աղքատ ընտանիքների դիմումների քննարկումը՝ նրանց համայնքի բյուջեից միանվագ դրամական օգնություն ցույց տալու մասին.

Զեկուցող՝ Ռ. Սիրականյան

Վարդաձոր համայնքի ավագանին որոշեց՝

Հաստատել նիստի օրակարգը՝

Կողմ 4, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Վարդաձորի գյուղապետ՝ ____________ Ռ. Սիրականյան

Համայնքի ավագանու անդամներ՝ ____________ Մ. Ավետիսյան

____________ Շ. Կարապետյանը

____________ Գ. Հայրապետյան

____________ Ն. Սիրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 24

29-ը Հոկտեմբեր 2013թ. գ. Վարդաձոր

***Համայնքի 2013թ. տարեկան բյուջեի առաջին 9 ամիսների կատարման արդյունքների մասին.***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ կետով, լսելով և քննարկելով համայնքի 2013թ. տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաշվետվությունը.

## Համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել համայնքի 2013թ. տարեկան բյուջեի առաջին եռամսյակի կատարման հաշվետվությունը, ըստ թիվ 1 հավելվածի՝ եկամտային մասը՝ ըստ թիվ 1 աղյուսակի

| հ/հ | Գործառությունների բովանդակությունը | 1-ին եռամսյակի առաջադրանքը /հազ.դրամ/ | կատարողականը /հազ. դրամ/ | կատարման տոկոսը |
|---|---|---|---|---|
| | Հարկեր և տուրքեր | 5811.0 | 6288.3 | 108.2 |
| | ն/թ հողի հարկ | 3840.0 | 2410.8 | 62.8 |
| | ապառք | 707.2 | | |
| | 2013թ. հողի հարկ | 3132.0 | | |
| | ն/թ Գույքահարկ | 188.0 | 3775.5 | 200.8 |
| | Տեղական տուրքեր և վճ. | 90.7 | 102.0 | 113.3 |
| | ն/թ նոր շին. թույլտվություն | 30.0 | | |
| | Շենքերի արդիականացման համար | 15.0 | | |
| | Ոգելից խմիչքների վաճառքի համար | 31.0 | | |
| | հիմնական շինարարություն | 15.0 | | |
| | Պետ.բյուջեից դոտացիա | 29641.5 | 29641.5 | 100 |
| | Այլ եկամուտներ | 88.5 | 680.3 | |
| | ն/թ հողի վարձավճար | 210.0 | | |
| | Արոտի վարձավճար | 60.0 | | |
| | ն/թ «Վիվասել» և «Օրանժ» | 600.0 | | |
| | Սահմանված ջրի վարձ | 75.0 | | |
| | այլ եկամուտներ՝ հողի օտարումից | | 171.0 | |
| | Ընդամենը սեփ. եկամուտ. | 6696.0 | 6967.7 | 104.0 |
| | Ընդհանուր բյուջե | 36337.5 | 36781.2 | 101.0 |

Ծախսային մասը՝ ըստ թիվ 2 աղյուսակի

Աղյուսակ 2

| Ծախսերի հոդվածներ | Գործառությունների բովանդակությունը | փաստացի կատարված /հազ. դրամ/ |
|---|---|---|
| 4111 | Աշխատավարձ | 13998.7 |
| 4111 | Մշակույթի տան աշխատավարձ | 3493.7 |
| 4112 | Պարգևատրում | 600.0 |
| 4212 | Էլ. էներգիայի վարձ | 280.0 |
| 4213 | Աղբահանություն | 600.0 |
| 4214 | Կապի ծառայություն | 108.0 |
| 4215 | Ապահովագրավճար | 32.0 |
| 4221 | Գործուղման ծախսեր | 55.2 |
| 4232 | «Ցենզուր» տեղեկատվական կետրոն | 111.0 |
| 4234 | Տեղեկատվական ծառ., թերթեր | 52.4 |
| 4235 | Գյուղ. խորհրդ. ծառ. | 50.0 |
| 4251 | Ջյան մաքրում ճանապարհներից | 2300.0 |
| 4225 | ՎԱԶ 21213 մեքենայի տեխ. սպասարկում | 234.0 |
| 4261 | Գրասենյակային ապրանքներ և նյութեր | 220.0 |
| 4264 | Բենզինի գնում | 800.0 |
| 4657 | Ամբուլատորիայի ներդրում | 1000.0 |
| 4779 | Համայնքի անդամների դրամական օգնություն | 1740.0 |
| 5113 | Խմելու ջրագծի կապ. նորոգում | 8971.2 |
| 5122 | Սարքավորումների ձեռք բերում | 158.0 |
| 5134 | Նախագիծ-նախահաշիվ | 215.0 |
| | Ընդամենը ծախսեր | |

Ընդհանուր ծախսեր 35016.631
ընդամենը սեփ. եկամուտներ 6968.7
Տարեսկզբի մնացորդ 8367.126
Ամբողջ եկամուտներ 45148.3
Ծախսեր 35016.631
Ընդամենը մնացորդ առ 01 հոկտեմբերի 2013թ. 10131694դրամ
ն/թ վարչական բյուջե՝ 9660.769 դրամ
ն/թ ֆոնդային բյուջե 470.926 դրամ
Վարդաձոր համայնքի ավագանին որոշեց՝
Հաստատել նիստի օրակարգը՝
Կողմ 4, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Վարդաձորի գյուղապետ՝ ________ Ռ. Սիրականյան

Համայնքի ավագանու անդամներ՝ ________ Մ. Ավետիսյան

________ Շ. Կարապետյանը

________ Գ. Հայրապետյան

________ Ն. Սիրականյան

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 25

29-ը Հոկտեմբեր 2013թ — գ. Վարդաձոր

***Համայնքի 2013թ. տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով

**Համայնքի ավագանին որոշում է՝**

1. Համայնքի 2013թ. տարեկան բյուջեի 4823 հոդվածից պակասեցնել 60000 /վաթսուն հազար/ դրամ և ավելացնել ջրամատակարարման ոլորտի նախահաշվին՝ 4822 հոդվածին, բնապահպանության վճար կատարելու համար,
2. Գյուղամիջյան ճանապարհների ընթացիկ նորոգման 4251 հոդվածից փոխանցումից հետո ավելացած գումարը 995000 /ինը հարյուր իննսունհինգ/ դրամը փոխանցել ֆոնդային բյուջե 5134 հոդվածին, նախագիծ-նախահաշվի գումար փոխանցելու համար,
3. ՀՀ կառավարության կողմից տրված 2013թ. աշխատվարձի գծով լրացուցիչ ծախսերի ֆինանսավորման «սուբվենցիան» 545000 /հինգ հարյուր քառասունհինգ հազար/ դրամից հատկացնել գյուղապետարանի ապարատին՝ 4111 հոդվածին 186500 /մեկ հարյուր ութսունվեց հազար հինգ հարյուր/ դրամ, մշակույթի աշխատավարձի 4111 հոդվածին 305600 /երեք հարյուր հինգ հազար վեց հարյուր/ դրամ և էլէներգիայի ծախսերի 4212 հոդվածին 52900 /հիսուներկու հազար ինը հարյուր/ դրամ:

Հարցը քվեարկվեց՝
Կողմ 4, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Վարդաձորի գյուղապետ՝ ______________ Ռ. Սիրականյան

Համայնքի ավագանու անդամներ՝ ______________ Մ. Ավետիսյան

______________ Շ. Կարապետյանը

______________ Գ. Հայրապետյան

______________ Ն. Սիրականյան

# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
# ԱՎԱԳԱՆԻ
# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26

29-ը Հոկտեմբերի 2013թ. գ. Վարդաձոր

***ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2013թ. հոկտեմբերի 23-ի թիվ 187-Ա որոշմամբ ներկայացված առաջարկությունների քննարկումը***

Քննարկելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2013թ. հոկտեմբերի 23-ի թիվ 187-Ա որոշումը՝ Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 7-րդ կետով.

**Համայնքի ավագանին որոշում է՝**

Վերահսկել Վարդաձոր համայնքի ղեկավարին իր լիազորությունների իրականացման նկատմամբ և պահանջել՝

1. Հարկերը ժամանակին չվճարողների նկատմամբ կիրառել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի պահանջը:
2. Առևտրի և ծառայությունների ոլորտում հսկողություն իրականացնել «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան:
3. Առևտրի և ծառայությունների ոլորտում իրականացված հսկողության արդյունքների վերաբերյալ պարբերաբար մարզպետարան ներկայացնել հաշվետվություն՝ «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան:
4. Ավագանու նիստերը հրավիրել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջների համաձայն:
5. Համայնքի ղեկավարի անհատական ակտերն ընդունելուց հետո 2-օրյա ժամկետում դրանք տրամադրել ավագանու անդամներին և փակցնել բնակչության համար տեսանելի վայրում:
6. Հաստատել և գործողության մեջ դնել ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը:
7. Վարել համայնքի ղեկավարի, ավագանու և գյուղապետարանի աշխատակազմի կողմից ընդունված իրավական ակտերի 2010-2011թթ. հաշվառման մատյանները:

Կողմ 4, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Վարդաձորի գյուղապետ՝ ____________ Ռ. Սիրականյան

Համայնքի ավագանու անդամներ՝ ____________ Մ. Ավետիսյան

____________ Շ. Կարապետյանը

____________ Գ. Հայրապետյան

____________ Ն. Սիրականյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱԾՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 27

29-ը Հոկտեմբերի 2013թ. գ. Վարդաձոր

## Համայնքի մի խումբ աղքատ ընտանիքների դիմումների քննարկումը, նրանց համայնքի բյուջեից միանվագ դրամական օգնություն ցույց տալու մասին

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և ՀՀ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով.

### Համայնքի ավագանին որոշում է՝

Համաձայնություն տալ Վարդաձոր համայնքի 2013թ. տարեկան բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդի 4729 հոդվածից 420000 (չորս հարյուր քսան հազար) դրամ որպես օգնություն տրամադրելու Վարդաձոր գյուղի սոցիալապես անապահով ներքոնշված ընտանիքներին,

Հետևյալ քանակությամբ՝

| հ/հ | Ազգանուն, անուն, հայրանուն | գումար/ տառերով/ դրամ |
|---|---|---|
| 1. | Խաչատրյան Անժիկ Ռաֆիկի | 30000 /երեսուն հազար/ |
| 2. | Մանասյան Դավիթ Քյարամի | 30000 /երեսուն հազար/ |
| 3. | Մարգարյան Սուսաննա Մանթաշովի | 30000 /երեսուն հազար/ |
| 4. | Կարապետյան Արևհատ Աշոտի | 30000 /երեսուն հազար/ |
| 5. | Պետրոսյան Լիդա Մնացի | 30000 /երեսուն հազար/ |
| 6. | Հովհաննյան Եղնուհի Ռազմիկի | 30000 /երեսուն հազար/ |
| 7. | Գասպարյան Բալաբեկ Սիմոնի | 30000 /երեսուն հազար/ |
| 8. | Հայրապետյան Վլադիմիր Մելիքսեթի | 30000 /երեսուն հազար/ |
| 9. | Մանուկյան Վաղարշակ Ապետնակի | 30000 /երեսուն հազար/ |
| 10. | Ասատրյան Ռազմիկ Սարգսի | 30000 /երեսուն հազար/ |
| 11. | Շառոյան Շուշիկ Պարգևի | 30000 /երեսուն հազար/ |
| 12. | Մաթևոսյան Քյարամ Գեղամի | 30000 /երեսուն հազար/ |
| 13. | Կարապետյան Սուսան Գառնիկի | 30000 /երեսուն հազար/ |
| 14. | Հայրապետյան Վիկտորիա Գառնիկի | 30000 /երեսուն հազար/ |

Կողմ 4, դեմ չկա, ձեռնպահ չկա:

Վարդաձորի գյուղապետ՝ ________ Ռ. Սիրականյան

Համայնքի ավագանու անդամներ՝ ________ Մ. Ավետիսյան

________ Շ. Կարապետյանը

________ Գ. Հայրապետյան

________ Ն. Սիրականյան